

Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար
պարոն Սերգո Աթանեսյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը

Հակոբ Մաթևոսյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ:

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Կանադա, ք.Մոնրեալ՝ սույն թվականի 2023 թվականի հոկտեմբերի 30-ից մինչև 31-ը:

4. Հրավիրող կողմը.

ՄԱԿ-ի «Կենսաբազմազանության մասին կոնվենցիա»-ի քարտուղարություն:

5. Գործուղման նպատակը

«Կենդանի վերափոխված օրգանիզմների հայտնաբերման, արձանագրման, հակազդման հետ կապված ռիսկերի գնահատման առաջխաղացում. Տեսության և պրակտիկայի 20-ամյակ» թեմայով աշխատաժողովին մասնակցելու նպատակով:

6. Քննարկված թեմաները

- Կենդանի վերափոխված օրգանիզմների հայտնաբերման և արձանագրման, ռիսկերի գնահատման ոլորտում քաղաքականության մշակման և վարման հետ կապված ահագնացող մարտահրավերները,
- «Կենսապահովություն, կենսաբազմազանություն, կլիմայի փոփոխություն, սննդի անվտանգություն և կայունություն» համակարգի բաղադրիչների միջև կապը,
- Ռիսկերի գնահատման կամավորական ուղեցույց, ինչպես նաև սոցիալ-տնտեսական բաղադրիչները դրանց տարբերությունները և կապը,
- Նոր մարտահրավերներ՝ գենային ինժեներիա, սինթետիկ կենսաբանություն, նոր գենոմային տեխնոլոգիաներ,
- Կենսաբազմազանության պահպանության գլոբալ շրջանակային ծրագրի 17-րդ թիրախի վերաբերյալ,
- Ինչպե՞ս ներառել կենսաանվտանգությունը կենսաբազմազանության ազգային ռազմավարություններում և գործողությունների ծրագրերում,
- Կունմինգ-Մոնրեալի գլոբալ կենսաբազմազանության շրջանակ, Մաքսային և սահմանային պաշտպանության 2030 թվականի իրականացման պլան,

փոխկապակցվածության նպատակների, թիրախների, ցուցանիշների, մոնիտորինգի և գնահատման վերաբերյալ,

- ինչպե՞ս աշխատել ընդհանուր և ներառական նպատակի և կենսաբազմազանության պահպան և կայուն օգտագործման գործում հստակ արդյունքների հասնելու համար:

7. Հանդիպումները ելույթները

Հանդիպման հիմնական նպատակն է եղել ընդգծել կենդանի վերափոխված օրգանիզմների հայտնաբերման, արձանագրման և անդրսահմանային փոխադրումների հետ կապված ռիսկերի գնահատման և ռիսկերի կառավարման առանձնահատկությունները, ինչպես նաև մեկտեղել ձևավորված կենդանի օրգանիզմների ռիսկերի գնահատման մեթոդոլոգիաների ըմբռնումն ու կիրառումը: Հանդիպումը կայացել է Կունմինգ-Մոնրեալի գլոբալ կենսաբազմազանություն շրջանակի համատեքստում, որի հիմնական նպատակը ոլորտում գիտելիքի փոխանակման, կարողությունների զարգացման և համագործակցության հարթակի ձևավորումն է, կենսաանվտանգության ոլորտում գործող կանոնակարգերի և որոշումների կայացման գործընթացները բարելավելու համար:

Հանդիպումների ընթացքում կազմակերպվել են ինտերակտիվ նիստեր և փոքր խմբերի քննարկումներ: Սիմուլյացիոն վարժանքների հիմնական նպատակը յուրաքանչյուր երկրի կառավարչական և գիտական համակարգի միջոցով տարբեր կենդանի վերափոխված օրգանիզմների արձանագրման ժամանակ՝ արագ արձագանքման մեխանիզմի ներկայացումը և այդ մեխանիզմներում առկա խնդիրների վերհանումն էր:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպան ընթացքում և դրա ավարտին որևէ պաշտոնական փաստաթուղթ կամ արձանագրություն չի ստորագրվել, քանի որ հանդիպումը կրել է ճանաչողական բնույթ և յուրաքանչյուր երկրի կողմից կենդանի վերափոխված օրգանիզմների հայտնաբերման, արձանագրման, անդրսահմանային տեղափոխությունների ռիսկերի գնահատման ոլորտում սեփական խնդիրների ներկայացման, լուծման առաջարկների, ինչպես նաև ներուժի բացահայտման նպատակ է հետապնդել:



Կոնվենցիայի քարտուղարությունը նշեց որ հանդիպման արդյունքում կիրառարակի գիտական զեկույց, որում կներառվեն յուրաքանչյուր մասնակից երկրների կողմից բարձրացված ոլորտում գործող հիմնական մարտահրավերները (ինստիտուցիոնալ, իրավական և այլն) և կփոխանցվեն մասնակից կողմերին:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատվությունները, ակնկալվող արդյունքները

Որպես նիստի անցկացման վերջնականատակ՝ նշվել է ցանկալի ձեռքբերումների շրջանակ է, որը կողմերին կօժանդակի իրականացնել կենդանի վերափոխված օրգանիզմների անդրսահմանային տեղափոխությունների, արձանագրման, ռիսկերի գնահատման և այլ անհրաժեշտ գործառույթների ոլորտում քաղաքականության վարման և իրավակարգավորումների գործում, այն ներառել է.

- պատմողական մաս, անդրադարձ է կատարվել նպատակներին, կառուցվածքին, վերանայմանը, առաջնահերթություններին և ռեսուրսներին,
- աղյուսակային հավելված, որը պարունակում է հստակ առանձնացված 3 նպատակ:

Նպատակ 1. Կողմերը իրականացնում են կենդանի ձևափոխված օրգանիզմների ռիսկերի գիտականորեն հիմնավորված գնահատումներ, ինչպես նաև կառավարում և վերահսկում են հայտնաբերված ռիսկերը՝ կանխելու կենդանի վերափոխված օրգանիզմների անբարենպաստ ազդեցությունները կենսաբազմազանության պահպանման և կայուն օգտագործման վրա՝ հաշվի առնելով նաև մարդու առողջությանը սպառնացող ռիսկերը:

Նպատակ 2. Կողմերը կիրառում են գիտականորեն հիմնավորված համապատասխան ընթացակարգեր՝ կենդանի վերափոխված օրգանիզմների ռիսկերի գնահատման և ռիսկերի կառավարման համար՝ համաձայն Կարթագենայի Արձանագրության Հավելված 3-ի:

Նպատակ 3. Կողմերը կիրառելու և մշակելու համար ունեն հասանելիություն Կարթագենայի արձանագրության Հավելվածներով սահմանված գործառույթներն իրականացնելու համար մշակված առցանց հարթակ և օգտագործում են համապատասխան ռեսուրսային նյութեր՝ գիտականորեն հիմնավորված ռիսկերի գնահատում և ռիսկերի կառավարում իրականացնելու համար:

Վերլուծելով կայացած երկօրյա քննարկումների մասնակից երկրների կողմից ներկայացված լոկալ խնդիրները, մարտահրավերները, հաջողված փորձը, անհրաժեշտ եմ համարում նշել մի շարք հանգամանքներ, որոնք անհրաժեշտ է իրականացնել կենդանի վերափոխված օրգանիզմների հայտնաբերման, արձանագրման, անդրսահմանային փոխադրումների կարգավորման, տեղեկատվության հասանելիության բարելավման նպատակով:

Պետության կողմից Կարթագենայի արձանագրության ներքո գործող պարտավորությունների իրականացման համար որպես հիմնական գործիք՝ հանդիսանում է Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի քարտուղարության կողմից մշակված առցանց համակարգը (BCH), որը հնարավորություն է ընձեռնում ոլորտի քաղաքականություն վարող պետական ինստիտուտներին, գիտական և կրթական կազմակերպություններին, ինչպես նաև պետական և մասնավոր լաբորատորիաներին առնչվել կենդանի վերափոխված օրգանիզմների հետ կապված ոլորտային գրեթե ողջ համակարգի հետ՝ գրանցվել որպես օգտատերեր, ազգային օգտատերեր, փորձագետ, վերբեռնել արձանագրված կենդանի վերափոխված օրգանիզմի վերաբերյալ հաշվետվություն և այլ անհրաժեշտ տեղեկատվություն, ներբեռնել այլ երկրներում նմանատիպ համապատասխան տեղեկատվություն,

ծանոթանալ դրանցում գործող օրենսդրությանը, նոր մշակված մեխանիզմներին և արագ արձագանքման համակարգին:

Չնայած երկրում միջուլորտային համագործակցության և տվյալների փոխանակման դրական տեղաշարժին, վերոնշյալ առցանց համակարգում՝ մեր երկիրը դեռևս բավականաչափ ակտիվ չէ, հետևաբար որպես առաջին քայլ՝ անհրաժեշտ է ներառել վերջերս օրենսդրական դաշտում իրականացված բարեփոխումները, տարբեր շահագրգիռ գերատեսչություններից, գիտական կազմակերպություններից և լաբորատորիաներից համակարգում գրանցել նոր օգտատերեր և փորձագետներ: Վերոնշյալի հիմնական նպատակներն են երկրի ներսում պետական և մասնավոր ինստիտուտների միջև կենդանի վերափոխված օրգանիզմների հետ կապված գործունեության ոլորտում կապի ստեղծումն է և փոխհամագործակցության խթանումը, միջազգային հարթակներում ներկայացման համար հստակ արդյունքների առկայությունը, ինչպես նաև ռիսկերի գնահատման գործում միջազգային գործընկերների հետ պետական համակարգում գործող բարեհաջող մեխանիզմների շուրջ փորձի փոխանակման ակնկալիքն է:



Գործուղվող՝

Հակոբ Մաթևոսյան